ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-23/58 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Սեղան աշակերտական, բարձրության կարգավորմամբ մեկտեղանի՝ 5-12-րդ դասարանների համար՝ աշակերտական սեղան՝ մեկտեղանոց, մետաղական կմախքով, գույները և չափերը՝ Առողջապահության նախարարության 28.03.2017թ. 12-Ն հրամանի և ԳՈՍՏ 11015-93 համապատասխան, չափսերը՝ 600x500x(h) 640մմ-760մմ, բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորվող: Սեղանի աշխատանքային հարթության համար պետք է օգտագործվի լամինացված ՓՏՍ՝ 18մմ հաստությամբ: Լամինացված ՓՏՍ-ի աշխատանքային հարթության անկյունները պետք է կլորացվեն R=30 մմ շառավղով, եզրերը շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Սեղանի առջևը փակվում է 550x350մմ չափսերի՝ 18մմ հաստությամբ, եզրերը 0.8-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC) շրջափակված լամինացված ՓՏՍ-ով, որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից և ամրացվում է մետաղական կմախքին: Սեղանի կմախքը պետք է լինի մետաղական քառանկյուն խողովակներից (25x25x2.0մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով, կմախքի արտաքին չափերը՝ 550 x 432 մմ, որին զոդման միջոցով ամրացվում են մետաղական ոտքերը: Սեղանի 2 զույգ մետաղական ոտքերից յուրաքանչյուրը իրենցից ներկայացնում է կարգավորվող բարձրությամբ երկու տրամաչափի քառանկյուն խողովակից՝ արտաքին և ներքին (միջուկ), բաղկացած կոնստրուկցիա: Արտաքին խողովակի չափերը՝ 25x25x2.0մմ, բարձրությունը՝ 565մմ: Ներքին խողովակի՝ միջուկի չափերն են՝ 20x20 x 2.0մմ, բարձրությունը՝ 565 մմ: Սեղանի ոտքերի արտաքին խողովակները զոդման եղանակով ուղղահայաց միացվում են գետնին

	հորիզոնական դիրքով դրված մետաղական քառակուսի խողովակից պատրաստված՝ 410մմ երկարությամբ հենակին, չափսերը՝ 25x25x2.0մմ: Հենակին միացվող 2 ոտքերի միջև հեռավորությունը՝ 120մմ: Հենակի եզրերը պետք է խցանված լինեն պլաստիկե բաց գույնի խցաններով՝ 5-6մմ հաստությամբ: Սեղանի ոտքերը պետք է ունենան 80մմ քայլով բարձության կարգավորման 3 հնարավորություն, որոնք յուրաքանչյուր կողմից ֆիքսվում են 2 հատ հեղուսե մանեկային կապով: Ձոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ և փոշեներկված բարձրակարգ ներկանյութով: Սեղանի երկու կողմերում պետք է լինեն մեկական մետաղական կախիչներ: Նմուշը /նմուշ-2/ կցվում է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ 365 օր: երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±5%:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ГРОСС ГРУП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/58 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	